ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«10» դեկտեմբերի 2020 թվական

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9/4

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ

**ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բադալյանը:**
**ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի ավագանու թվով 22 (քսաներեք) անդամներ՝**
Ս.Բալասանյանը, Հ.Կարապետյանը, Լ.Խաչատրյան, Տ.Հովհաննիսյանը, Մ.Սահակյանը, Լ.Սանոյան, Տ.Փանոսյանը, Վ.Եդիգարյանը, Ա.Գրիգորյանը, Գ.Սարգսյանը, Գ.Գրիգորյանը, Վ.Հունանյանը, Ս.Աստոյանը, Կ.Թաթարյանը, Ա.Խաչատրյանը, Ա.Աղանյանը, Ռ.Սարգսյանը, Լ.Բարսեղյանը, Ա.Գրիգորյանը, Ա.Խաչատրյանը, Գ.Մաթևոսյանը, Հ.Պողոսյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բադալյանը:

ԼՍԵՑԻՆ.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 19**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի հերթական չորրորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

**Որոշումն ընդունվեց**

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 190-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 19**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի «Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» N 190-Ա որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

ԼՍԵՑԻՆ.

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 234-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 21**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**

Համայնքի ավագանու անդամներ Տիգրան Փանոսյանը, Լուսինե Սանոյանը քվեարկությանը մասնակցեցին օրակարգի 3-րդ հարցից:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 234-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1–ին կետի 1-ին ենթակետի «4 773 387 000 (չորս միլիարդ յոթ հարյուր յոթանասուներեք միլիոն երեք հարյուր ութսունյոթ հազար)» թիվը և բառերը փոխարինել «4 576 450 200 (չորս միլիարդ հինգ հարյուր յոթանասունվեց միլիոն չորս հարյուր հիսուն հազար երկու հարյուր)» թվով և բառերով,

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «5 341 387 800 (հինգ միլիարդ երեք հարյուր քառասունմեկ միլիոն երեք հարյուր ութսունյոթ հազար ութ հարյուր)» թիվը և բառերը փոխարինել «5 144 451 000 (հինգ միլիարդ հարյուր քառասունչորս միլիոն չորս հարյուր հիսունմեկ հազար)» թվով և բառերով:

2. Գյումրի համայնքի բյուջեի հավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1,2,3,4 հավելվածների:

**Որոշումն ընդունվեց**

ԼՍԵՑԻՆ.

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ 55 000000 (ՀԻՍՈՒՆՀԻՆԳ ՄԻԼԻՈՆ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԸ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 21**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի (այսուհետ՝ բյուջե) նախատեսնված վարչական մասի պահուստային ֆոնդից 55 000 000 (հիսունհինգ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամն ուղղել բյուջեի ֆոնդային մաս:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա-նտեսագիտական բաժնի պետին՝ կատարել սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխությունը՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց**

ԼՍԵՑԻՆ.

5. ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 21**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հատկացնել դրամական օգնություն սոցիալապես անապահով պայմաններում ապրող ներքոգրյալ ընտանիքներին և անձանց.
1) Արցախյան պատերազմում (1991-1994թվականներին) զոհված թվով 104 (մեկ հարյուր չորս) ազատամարտիկների ընտանիքներից յուրաքանչյուրին՝ 20 000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2 080 000 (երկու միլիոն ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N1 հավելվածի,
2) զոհված (մահացած) թվով 250 (երկու հարյուր հիսուն) զինծառայողների ընտանիքներից յուրաքանչյուրին՝ 20 000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 5 000 000 (հինգ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N 2 հավելվածի,
3) Արցախյան պատերազմի 1-ին կարգի հաշմանդամ թվով 15 (տասնհինգ) ազատամարտիկներից յուրաքանչյուրին՝ 15 000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 225 000 (երկու հարյուր քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ ՝ համաձայն N3 հավելվածի,
4) 2-րդ, 3-րդ կարգի հաշմանդամ՝ թվով 234 (երկու հարյուր երեսունչորս) ազատամարտիկներից յուրաքանչյուրին 10 000 (տասս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2 340 000 (երկու միլիոն երեք հարյուր քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N 4 հավելվածի,
5) Հայրենական Մեծ պատերազմի մասնակից Գյումրի քաղաքի թվով 10 (տաս) վետերաններից յուրաքանչյուրին 15 000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N5 հավելվածի:

6) 1956 թվականի հոկտեմբերին Հունգարիայի հեղաշրջման ճնշմանը մասնակից թվով 5 (հինգ) վետերաններից յուրաքանչյուրին՝ 15 000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 75 000 (յոթանասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N6 հավելվածի:
7) Գյումրու տարածքային բաժանմունքի երկրապահ թվով 15 (տասնհինգ) կամավորականներից յուրաքանչյուրին 15 000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 225 000 (երկու հարյուր քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ ՝ համաձայն N7 հավելվածի:
2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/4/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
**Որոշումն ընդունվեց**

ԼՍԵՑԻՆ.

6. ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ, ՍԱԿԱՅՆ ՄԻՆՉ ՕՐՍ ՓՆՏՐՎՈՂ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 22 (ՔՍԱՆԵՐԿՈՒ) ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 21**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**
Համայնքի ավագանու անդամ Արման Գրիգորյանը քվեարկությանը մասնակցեց օրակարգի 6-րդ հարցից: Գրիգոր Գրիգորյանը չմասնակցեց օրակարգի 6-րդ հարցին:

ՈՐՈՇԵՑԻՆ.
1. Ռազմական գործողություններին մասնակցություն ցուցաբերած, սակայն մինչ օրս փնտրվող սոցիալապես անապահով թվով 22 (քսաներկու) զինծառայողների ընտանիքներից յուրաքանչյուրին որպես դրամական օգնություն կանխիկ հատկացնել 50 000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 1 100 000 (մեկ միլիոն մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
**Որոշումն ընդունվեց**

ԼՍԵՑԻՆ.

7. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 110 (ՄԵԿ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍԸ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 22**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**
ՈՐՈՇԵՑԻՆ.

Թվով 110 (մեկ հարյուր տասը) անձանց որպես դրամական օգնություն կանխիկ հատկացնել 1210000 (մեկ միլիոն երկու հարյուր տասը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 21**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**

Համայնքի ավագանու անդամ Գրիգոր Գրիգորյանը քվեարկությանը չմասնակցեց օրակարգի 8-17-րդ հարցերի քվեարկությանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Մհեր Մկրտչյանի թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել նվիրատվություն 350 000 (երեք հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ ընթացիկ վերանորոգման և անհրաժեշտ այլ ծախսերի կատարման համար:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 8/2/2 գործառական «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՆՈՒՄԸ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻՑ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ, ԱՌԱՆՑ ԳՆՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ, ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 21**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Թույլատրել իրականացնել տրանսպորտային միջոցի (ծառայողական մեկ ավտոմեքենա) անհետաձգելի համարվող գնումը երկրորդային շուկայից բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնման հայտարարությունը նախապես հրապարակելու:
2. Հատկացնել 4 700 000 (չորս միլիոն յոթ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ տրանսպորտային միջոցի գնումը կատարելու համար:
3. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 1/1/1 գործառական դասակարգման (5121)

Թվով 110 (մեկ հարյուր տասը) անձանց որպես դրամական օգնություն կանխիկ հատկացնել 1210000 (մեկ միլիոն երկու հարյուր տասը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 21**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

Համայնքի ավագանու անդամ Գրիգոր Գրիգորյանը քվեարկությանը չմասնակցեց օրակարգի 8-17-րդ հարցերի քվեարկությանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Մհեր Մկրտչյանի թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել նվիրատվություն 350 000 (երեք հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ ընթացիկ վերանորոգման և անհրաժեշտ այլ ծախսերի կատարման համար:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 8/2/2 գործառական «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՆՈՒՄԸ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻՑ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ, ԱՌԱՆՑ ԳՆՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ, ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 21**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Թույլատրել իրականացնել տրանսպորտային միջոցի (ծառայողական մեկ ավտոմեքենա) անհետաձգելի համարվող գնումը երկրորդային շուկայից բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնման հայտարարությունը նախապես հրապարակելու:
2. Հատկացնել 4 700 000 (չորս միլիոն յոթ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ տրանսպորտային միջոցի գնումը կատարելու համար:
3. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 1/1/1 գործառական դասակարգման (5121)

«Տրանսպորտային սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 96-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 22**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 10-ի «2019 թվականի ընթացքում աշխարհի, Եվրոպայի և Հայաստանի Հանրապետության առաջնություններում առավել բարձր արդյունքների հասած գյումրեցի մարզիկների մարզիչներին դրամական պարգևներ շնորհելու մասին» N 96-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետում «6 972 000 (վեց միլիոն ինը հարյուր յոթանասուներկու հազար» թիվը և բառերը փոխարինել 7 146 000 (յոթ միլիոն մեկ հարյուր քառասունվեց հազար» թվով և բառերով:

2) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում «մնացած» բառից հետո «3 486 000 (երեք միլիոն չորս հարյուր ութսունվեց հազար» թիվը և բառերը փոխարինել «3 660 000 (երեք միլիոն վեց հարյուր վաթսուն հազար» թվով և բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 25-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 21**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1.Հաստատել Կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը ըստ ոլորտների.

1) մշակույթի՝ թվով 19 (տասնինը) համաձայն NN 1-19 հավելվածների,

2) սպորտի՝ թվով 15 (տասնհինգ) համաձայն NN 20-34 հավելվածների,

3) կրթության՝ թվով 24 (քսանչորս) համաձայն NN 35-58 հավելվածների:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Գյումրի համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 20-ի N 221-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 25-Ա որոշումը:

3.Կազմակերպությունների տարիֆիկացիաների հաստատումը վերապահել Գյումրի համայնքի ղեկավարին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 202-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Ս.ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 21**

**դեմ – 0**

**ձեռնպահ –0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 169-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 11-ի N 202-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 202-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման 2-րդ կետով հաստատված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 01-ից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 216-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Ռ.ԱՆԴՐԻԱՍՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 21**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2021 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2020 թվականի դրույքաչափերը սահմանելու և Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 11-ի N 201-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 216-Ն որոշումը:

3. Սույն որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկել՝ կիրառելով 0,75 (զրո ամբողջ յոթանասունհինգ հարյուրերրորդական) գործակից, իսկ 4-րդ ենթակետով սահմանված դրույքաչափը հաշվարկել՝ կիրառելով 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) գործակից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 01-ից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

**Որոշումն ընդունվեց**

ԼՍԵՑԻՆ.

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 202-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 21**

**դեմ – 0**

**ձեռնպահ –0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 169-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 11-ի N 202-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 202-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման 2-րդ կետով հաստատված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 01-ից:

**Որոշումն ընդունվեց**

ԼՍԵՑԻՆ.

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 216-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ռ.ԱՆԴՐԻԱՍՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 21**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2021 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2020 թվականի դրույքաչափերը սահմանելու և Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 11-ի N 201-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 216-Ն որոշումը:
3. Սույն որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկել՝ կիրառելով 0,75 (զրո ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) գործակից, իսկ 4-րդ ենթակետով սահմանված դրույքաչափը հաշվարկել՝ կիրառելով 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) գործակից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 01-ից:

**Որոշումն ընդունվեց**

ԼՍԵՑԻՆ.

14. ՔԱՂԱՔԱՑԻ ՅՈՒՐԻԿ ՆՈՐԱՅՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2018-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ՋԱՆՈՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 22**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1.Սահմանել արտոնություն քաղաքացի Յուրիկ Նորայրի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի դրությամբ գույքահարկի 2018-2020 թվականների մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ՝ ազատելով գույքահարկի 180 827 (մեկ հարյուր ութսուն հազար ութ հարյուր քսանյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից մայր գումարը կազմում է 161 979 (մեկ հարյուր վաթսունմեկ հազար ինը հարյուր յոթանասունինը) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 18 848 (տասնութ հազար ութ հարյուր քառասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էլեոնորա Նիկոլաևնա Վարդանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

15. ՔԱՂԱՔԱՑԻ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԵՐԱՎՃԱՐԻ ԳՈՒՄԱՐԸ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ՋԱՆՈՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 21**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1.Հետ վերադարձնել քաղաքացի Լևոն Հովհաննեսի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի գույքահարկի գերավճարի 281 528 (երկու հարյուր ութսունմեկ հազար հինգ հարյուր քսանութ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարը:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարը վերադարձնել քաղաքացի Լևոն Հովհաննեսի Գևորգյանի 220060298837000 քարտային հաշվին՝ Գյումրի համայնքի տրանսպորտային միջոցի գույքահարկի 900215301582 հաշվարկային հաշվից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լևոն Հովհաննեսի Գևորգյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԻ, ԿՐՊԱԿՆԵՐԻ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՅԼ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՆՉԵՎ 20,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 208-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 21**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**
1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում ավտոտնակների, կրպակների, առևտրի և սպասարկման այլ օբյեկտների տեղադրման նպատակով առանց մրցույթի մինչև 20,0 (քսան) քառակուսի մետր մակերեսով հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման համար սահմանել վարձավճարներ՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տաղավարների, կրպակների, առևտրի ու սպասարկման այլ օբյեկտների և ավտոտնակների տեղադրման նպատակով առանց մրցույթի մինչեվ 20,0 (քսան) քառակուսի մետր մակերեսով հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման 2020 թվականի վարձավճարների չափերը սահմանելու մասին» N 208-Ա որոշումը:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 21**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**
Համայնքի ավագանու անդամ Վահան Հունանյանը քվեարկությանը չմասնակցեց օրակարգի 17-18-րդ հարցերի քվեարկությանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում աստիճաններ կառուցելու նպատակով հողամասերի առանց մրցույթի կառուցապատման իրավունքի տրամադրման համար սահմանել վարձավճարներ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշմամբ հաստատված հավելվածում սահմանված վարձավճարների դրույքաչափերը շահույթ հետապնդող ֆիզիկական և իրավաբանական անձանց համար հաշվարկել՝ կիրառելով 2 (երկու) գործակից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 21**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել

աճուրդով և հաստատել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

**Որոշումն ընդունվեց**

ԼՍԵՑԻՆ.

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ N 167 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 22**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 25112020-08-0034) Երևանյան խճուղի N 167 հասցեի 0,417068 (զրո ամբողջ չորս հարյուր տասնյոթ հազար վաթսունութ միլիոներորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը (կադաստրային ծածկագիր 08-001-1184-0103) մրցույթով կառուցապատման իրավունքով 50 (հիսուն) տարի ժամկետով՝ տրամադրել օգտագործման բարեկարգման, կանաչապատման նպատակով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի մրցույթի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 292000 (երկու հարյուր իննսուներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

**Որոշումն ընդունվեց**

ԼՍԵՑԻՆ.

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ N 2/3 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 22**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 25112020-08-0030) Մովսես Խորենացու փողոց N 2/3 հասցեի 0,279431 (զրո ամբողջ երկու հարյուր յոթանասունինը հազար չորս հարյուր երեսունմեկ միլիոներորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը մրցույթով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել 25 (քսանհինգ) տարի ժամկետով, հանգստի գոտի կազմակերպելու նպատակով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 196000 (մեկ հարյուր իննսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

**Որոշումն ընդունվեց**

ԼՍԵՑԻՆ.

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԱՎՈՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4 (ՉՈՐՍ) ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻՑ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԹՎՈՎ 3 (ԵՐԵՔ) ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Մ.ԴԱՎԹՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 22**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N30062020-08-0021) թվով 3(երեք) բնակելի տարածքներն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՎՏՐԻԱԿԱՆ» հիվանդանոցի տարածքում տեղադրված մոդուլ-տնակներում (ժամանակավոր կացարաններ) բնակվող քաղաքացիներին՝ համաձայն հավելվածի:

**Որոշումն ընդունվեց**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու իններորդ նստաշրջանը հայտարարվեց փակված:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

Ս. Բալասանյան ____________

Հ. Կարապետյան ____________

Լ. Խաչատրյան ____________

Տ. Հովհաննիսյան____________

Մ. Սահակյան ____________

Լ. Սանոյան ____________

Վ. Եդիգարյան ____________

Ա.Գրիգորյան ____________

Վ. Հունանյան ____________

Գ. Սարգսյան ____________

Տ. Փանոսյան ____________

Գ.Գրիգորյան ____________

Կ. Թաթարյան ____________________

Ս. Աստոյան ____________________

Ա. Խաչատրյան ____________________

Ա.Աղանյան ____________________

Ռ. Սարգսյան ____________________

Լ. Բարսեղյան ____________________

Ա. Գրիգորյան ____________________

Ա. Խաչատրյան ____________________

Գ. Մաթևոսյան ____________________

Հ.Պողոսյան ____________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

**քաղաք Գյումրի**
**«10» դեկտեմբերի 2020 թվական**